Աշխատեցաւ ու մաղովուրդին մէջ,
Սրփռեց դիտութեան լոյսն ու յոյսն անշէջ։

Վերջին տարիներս, ցաւեր վրշտագին,
Խոր ծերութեան մէջ զինքը ընկճեցին,
Յոգնած էր այլ ևս, յոգնած, պարտասած,
Մոռցաւ ամէն բան ու թրքաւ, զինաց։

Թուղթ, գրիչ, մելան, Մամուլ ու մատեան
Իրենց սիրելին կ'ողբան յաւիտեան։
Ո՜հ, մեծ կորուստին վիշտն է հաւատար,
Որ պատճառեց մեզ սուգ անմխիթար։

« Մաքրափայլ հոգի, թրքաւ արդ երկինք
« Ուրախութեան անդ բազմել ի հարկինք
« Ո՜ւր Աստուածեան փառաց գահիներ
« Անթառամ պրսակ հիւսեն քեզ դուէր... »։

« Երջանիկ մեռար, անմահ Մամուրեան
« Գերեզմանն ահա մարմնոյդ օթեւան
« Սիրելիներուդ հետ խաղաղ հանգչէ՝
« Ութոյ մարդկութիւնն ըզքեզ մի՛շտ յիշէ ..»։

ՅԻԳԵՐԱՆ Պ. ԳԱՍԱՊԵԱՆ

ՈՐԲԵՐԸ

ԳԵՂՕՆ

Դագրեր էին անձրեւ, կարկուտ,
Թուփերն էին կանաչացեր,
Բայց գիշերները սառն ու ցուրտ
Ձմեռրուէին գեամնը գեռ։

Հեռուն՝ ժայռի մը կըշտին քով՝
Երկու փոքրեր՝ քոյր և եղբայր
Եկան նըստել. մին անվրդով,
Միւսը տրխուր ու դալկահար։

ԵՂԲԱՅՐԸ

Ո՞ւրչափ հեռու ենք մեր գիւղէն.
Կը տեսնե՞ս ժամն։ Անօթի եմ։
Ես շատ յոգնած եմ քալելէն.
Քուրիկ, քըշիկ մը հաց կ'ուզեմ։

ՔՈՅՐԸ

Անհաւասիկ, ա՜ռ, ամբողջ կեր,
Ես տակաւին անօթի չեմ.
Կըմնամ մինչեւ վաղն ըսպասել,
Չի քեզմէ չորս տարի մեծ եմ։

ԵՂԲԱՅՐԸ

Բայց կ'ազաչեմ քեզ, իմ քուրիկ,
Ըսէ ինծի թէ մենք ինչու՞
Մինչ նընջէ մեր սիրուն մայրիկ՝
Կը թափառինք տունէն հեռու։

ՔՈՅՐԸ

Վասըն զի մեր բարի մայրիկ
Իր խոր քունէն ալ չ'արթընոար.
Եւ զի չունինք մենք ոչ օթիկ
Որ աշխատի մեզի համար։

ԵՂԲԱՅՐԸ

Վերջ չունի՞ այդ քուն։

ՔՈՅՐԸ

Հոգին տակ
Ցանկապատին մէջ առանձնակ . . .
Պիտի նընջէ նա յաւիտեան։

ԵՂԲԱՅՐԸ

Պիտի չտեսնե՞մ երբեք ես ան։

ՔՈՅՐԸ

Աբքայութեան մէջ ան շրքեղ՝
Կ'երգէ սրբոց հետ զուարթաբար,
Պիտ՝ ունենանք անոր քով տեղ,
Եթէ չըլլանք, եղբայր իմ, չար։

ԵՂԲԱՅՐԸ

Քուրիկ, եղբայրըդ պիտ՝ ըլլայ
Խելօք, քեզի ես խօսք կու տամ,
Բայց կը խրփուին աչերս ահա,
Ըսէ, կ'ուզե՞ս արփեօք քնանամ։

ՔՈՅՐԸ

Այո՛, ինձ ալ կը բերէ քուն
Գիշեր, նընջենք մինչեւ առաւ.
Ցետոյ կ'երթանք կարկառելու
Մեր ձեռուրներ հարուստներուն։

Երբ արշալոյսն երեւցաւ
Խոան ու թրփիկ սառեր էին,
Որբերը գեռ կը նընջէին . . .
Ու չարթընցան անոնք բընաւ։

ԷՍՏՈՒԱՌ Տ'ԱՆԳԼԷՄՈՆ

Թրգմ. Հ. Ա. ԴԱՎԱԹԵԱՆ

digitised by A.R.A.R.@